ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԻ ԲՂԵՆ ԳԱՎԱՌԸ

Սյունյաց աշխարհի քիչ հայտնի գավառներից էր Բղենը, որի մասին տեղեկություններ հաղորդում է Ստեփանոս Օրբելյանը։ Նրա «Պատմության» ԽԵ գլուխը վերնագրված է «Վասն շինութեան Նորավանից, որ ի գաւառին Բղենոյ»։ Հիշյալ գլխում պատմիչը խոսում է ոմն Ստեփանոս քահանայի կողմից Նորավանքի կառուցման մասին, որի շինարարությունը ավարտվել է 936 թ.՝ «Գնացեալ ապա ի թիկանց կուսէ Կատարոյ վանից. և գտեալ տեղի մի յոյժ գեղեցիկ և վայելուչ՝ ի մէջ երկու ձորոց ի վերայ հարթ ոստոյ միոյ, սկսանի շինել եկեղեցի օժանդակութեամբ Հրահատայ իշխանի. և կատարէ զնա, և այլ ևս գաւիթս և սրահս եկեղեցւոյն և բնակութիւն կրօնաւորաց։

Եւ կոչեալ ի նաւակատիս զՏէր Յակոբ՝ Սիւնեաց եպիսկոպոս, սահմանեն զնա եղբայրանոց և զվայրն ամենայն շրջակայ՝ ժառանգութիւն եկեղեցւոյն, և դնեն զոդեստունս հանդէպ վանիցն. և ժողովեալ ուրուքս բազումս անդ զարմանէին. և այսպէս պայծառացուցեալ ամենայն սպասուք և կարգաւք զվանսն յ385 թուականին Հայոց»[1]։

Նորավանքից բացի, որի տեղադրությանը կանդրադառնանք ստորև, գավառի բնակավայրերից է եղել Բղեն բերդը, որից էլ, ամենայն հավանականությամբ, իր անունն է ստացել գավառը։ Այդ բերդը Սյունիքի առավել նշանավոր պաշտպանական կառույցներից մեկն է եղել[2]։

Ըստ «Աշխարհացույցի» Սյունյաց աշխարհը ունեցել է 12 գավառ։ Ֆեոդալական հարաբերությունների հետագա խորացման և ֆեոդալական ընտանիքների տրոհման հետևանքով Սյունիքի այդ գավառները ենթարկվեցին մանրատման, ծնունդ տալով նոր գավառների[3], որոնցից էր նաև Բղենը։ Սակայն տարակարծություններ կան այն մասին, թե որ գավառի տրոհման հետևանքով է առաջացել Բղենը։

Տաթևի վանքի հարկատու գյուղերի հին ցուցակում պահպանվել են Բղեան և Բողեան գյուղանունները, որոնցից առաջինը վերաբերում է Ծղուկ, իսկ երկրորդը՝ Հարանդ[5] գավառներին։ Ամենայն հավանականությամբ այս բնակավայրերից մեկը առնչություն ունի ուսումնասիրվող բերդի և գավառի հետ։ Դժբախտաբար մեզ հայտնի չեն Բղեն գավառի մեջ մտնող այլ բնակավայրերի անուններ, որոնց տեղադրությունը որոշ պարզություն կմտցներ այս հարցում։ Այնուամենայնիվ ուսումնասիրողների կողմից առ այսօր կատարված հետազոտությունները՝ Բղեն գավառի և բերդի, ինչպես նաև Բղենո Նորավանքի տեղադրության վերաբերյալ, հնարավորություն են ընձեռում որոշելու և պարզաբանելու գավառի հետ կապված պատմա-աշխարհագրական բնույթի մի շարք հարցեր։

Ինճիճյանը, անդրադառնալով Բղեն բերդի տեղադրությանը, գրում է. «Թուի(ն) լինել՝ ի Բաղաց գաւառի...»[6]։ Այս ենթադրության համար հիմք է ծառայել Օրբելյանի հետևյալ վկայությունը. «...ի 554-ին առաւ Բղենն. և գերեցաւ խոսրովիկ իշխանն. եւ ի սուր սուսերի մաշեցան բազմութիւնք քրիստոնէից, և բնաւին յաւեր անցաւ տունն Բաղաց...»[7]։

Ալիշանը այդ հարցի կապակցությամբ գրել է. «...և ոչ ուրեք այլ յիշի գաւառ յայս անուն, այլ գեօղ մի ի Հարանդ գաւառի, և Բղենոյ բերդ, որոյ գաւառ ոչ նշանակի. յիշի Բղեն և այլ ուրեք ուրեք, սակայն դիրք դոցին ոչ ի միում վայրի թուին. զի Ջուրն Բղենոյ թուի լինել հարավագոյն եւս քան զտեղագրեալս վայր, իսկ ջուրն Ջագեձորոյ որ ընդ մէջ սահմանաց Ծղկայ և Հարանդայ՝ մերձ ինքեան ցուցանէ և զԲողեն ընդ Բորոտնայ, ըստ որում զոյգ հիշի և այլուր. և Բորտի է, յԱյլախ, այսինքն արեւելեան Ծղուկս...»[8]։

Ալիշանի տեղադրությունը բավական անորոշ է և, ինչպես նշել է Թ. Հակոբյանը, «...գրեթե բոլորովին չի լուծում Բղեն բերդի և գավառի տեղադրության հարցը»[9]։

Մ. Հովհաննիսյանը, համամիտ չլինելով Ինճիճյանին, իրավացիորեն նշում է, որ Բաղաց թագավորությունը ընդգրկում էր Սյունիքի մի քանի գավառները և Օրբելյանի այդ վկայությունից չի կարելի հետևցնել, թե այն Բաղք գավառի տարածքում է եղել։ Իր հերթին Մ. Հովհաննիսյանը Բղեն բերդը տեղադրում է Ծղուկ

---

1 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 245։

2 Նույն տեղում, էջ 13։

3 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 22—23։

4 Ստեփանոս Օրբելյան, էջ 510։

5 Նույն տեղում, էջ 517։

6 Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 286։

7 Ստեփանոս Օրբելյան, էջ 334։

8 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 278։

9 Թ. Խ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966, էջ 135։

գավառում՝ կովան ունենալով համանուն գյուղի գոյությունը Ծղուկում[10]։ Սակայն եթե Բղեն բերդը փորձենք տեղադրել Ծղուկ գավառի տարածքում լոկ այն պատճառով, որ այնտեղ հիշատակվում է Բղեան անունով գյուղ, ճիշտ չի լինի, քանի որ նույն հավանականությամբ Բղեն գավառը իր անունը կարող էր ստանալ Հաբանդի Բուղեան գյուղից։

Բղեն բերդի, գավառի և Նորավանքի տեղադրությանը անդրադարձել են նաև սովետահայ պատմաբանները։ Այսպես. Թ. Հակոբյանը, ելնելով Օրբելյանի հաղորդած վկայությունների քննությունից, այն կարծիքն է արտահայտել, որ Բղեն բերդը պետք է գտնվեր Որոտն և Բարկուշատ բերդերի միջև, իսկ գավառը՝ Բաղքի, Ծղուկքի, Հաբանդի և Քաշունիքի սահմանագլխին, համապատասխանելով Բաղքի (Աճեն) հյուսիսային մասին[11]։

Մատենագրական վկայությունների և կատարված ուսումնասիրությունների քննության հիման վրա Գ. Սարգսյանը Բղենո Նորավանքը համարում է Բարձրավան գյուղից արևելք, տեղացիների կողմից Ջհաննամ դարասի (Դժոխաձոր) կոչվող վայրում գտնվող վանքը, իսկ Բղեն բերդը՝ Որոտան գետի հովտում, Տաթևից ցած, Գորիսի գետակի գետախառնուրդի մոտերքում պահպանված ամրություններից մեկը։ Վերոհիշյալից ելնելով Գ. Սարգսյանը Բղեն գավառը տեղադրում է Բաղքի հյուսիսային մասում[12]։

Ս. Գ. Բարխուդարյանը, համամիտ լինելով Գ. Սարգսյանի կողմից Նորավանքի տեղորոշմանը, այն կարծիքն է հայտնել, որ Նորավանքը, իր շրջակայքով հանդերձ, եղել է Հաբանդ գավառի տարածքում, երբեմն կազմելով առանձին գավառ, որը կոչվել է Բղեն բերդի անունով[13]։ Ելնելով Թ. Հակոբյանի, Գ. Սարգսյանի և Ս. Բարխուդարյանի տեղադրություններից, պետք է նշել, որ չնայած տվյալ հարցում նրանք ունեն տարբեր ելակետեր, այնուամենայնիվ նույն տարածքում են տեղադրում Բղեն գավառը։ Ավելի կոնկրետացնելով նրանց ուսումնասիրության արդյունքները, կարող ենք ասել, որ Բղեն գավառը գտնվում էր Բարկուշատ գետի[14] աջ ափին և ընդգրկում էր ներկայիս ՀՍՍՀ Գորիսի շրջանի Բարձրավան, Շուրնուխ, ինչպես նաև Ադրբ. ՍՍՀ Ղուրաթլուի շրջանի Սեյթաս[15], Գեյարբաս, Ջիբիլլու, Գեյարջիկ, Թամիր Մուսկանլու, Գյուրջուլու, Բախտիարլու գյուղերը իրենց շրջակայքով (տե՛ս նկարը)։ Համաձայն Ս. Տ. Երեմյանի կազմած «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի» քարտեզի սահմանարաժանումների, այս տարածքը համապատասխանում է Հաբանդ գավառի հարավ-արևելյան մասին[16]։

1974 թ. մեր ուշադրությունը գրավեցին երկու հինավուրց բերդերի ավերակներ։ Դրանցից մեկը գտնվում է Բարգուշատի գետի աջ ափին, Ադրբ. ՍՍՀ Ղուրաթլուի շրջանի Դավութլու գյուղից ոչ հեռու։ Այս բերդի մասին Ալիշանը գրել է. «Մերձ ի խառնուրդսն նշանակի Տավութլու գիւղ և բերդատեղի, ոչ գիտեմ յանո՞ւն Դաւթի բէկի թե այլում»[17]։

Երկրորդ բերդը Ադրբ. ՍՍՀ Ղուրաթլուի շրջանի Բախտիարլու գյուղի հարավային մասում է, Բարգուշատ գետի աջ բարձրադիր ափին և ներկայումս կոչվում է Գյավուր ղալասը։ Հիշյալ երկու ամրությունները գտնվում են միմյանցից մոտավորապես 6 կիլոմետր հեռավորության վրա և, մեր կարծիքով, համապատասխանում են Որոտան և Բղեն բերդերին, համաձայն Օրբելյանի հաղորդած ներքոհիշյալ տեղեկության. «...էառ և թափեաց զերկիրն Որոտան բովանդակ մինչ ի սահմանն Բորոտնայ և Բղենոյ, յորում և կայր ընդ աւեր

---

10 Մ. Հովհաննիսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 414։

11 Թ. Խ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 135—136։

12 Գ. Սարգսյան, Բղենո Նորավանք, «Էջմիածին», 1952, № 3, էջ 27—32, № 4, էջ 28—38, № 6, էջ 41—46։

13 «Դիվան հայ վիմագրության», պրակ 2, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 41։

14 Որոտան գետը Գորիսի շրջանի Խոտ գյուղից մի փոքր արևելք հայտնի է Բարկուշատի գետ անունով (տե՛ս Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 19)։

15 Սեյթաս գյուղը ամենայն հավանականությամբ համապատասխանում է Տաթևի թեմի պտղի ցուցակում (տե՛ս Ա. Աբրահամյան, Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, Երևան, 1942, հավելված, էջ 42) Մաղանջուխու գավառի բնակավայրերի թվում հիշատակվող Սեթանց բնակավայրին։

16 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, տե՛ս քարտեզը։

17 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 262։

18 Անառիկ դիրք ունեցող այս ամրությանը կարելի է մոտենալ ոլորապտույտ ճանապարհով, որը սկսվում է Բախտիարլու գյուղից և բարձրանում դեպի վեր՝ շրջանցելով բերդը հյուսիս-արևմուտքից և մոտենում նրան հարավային կողմից։ Բերդից այսօր շատ քիչ բան է պահպանվել։ Պարիսպների մնացորդներից երևում է, որ այն կառուցված է եղել առանց շաղախի, խոշոր քարաբեկորներից։

աթոռն Սիւնեաց Տաթև»[19]։ Այս վկայությունից թերևս կարելի է եզրակացնել, որ Բորոտանը և Բղենը գտնվելիս են եղել իրար մոտ։ Միաժամանակ կարելի է ենթադրել, որ Դավութլուի բերդը համապատասխանում է Բորոտանին, իսկ Գյավուր-ղալասին՝ Բղենին, քանի որ վկայության մեջ Բորոտանը հիշվում է Բղենից առաջ։

Փորձենք հիմնավորել մեր տեսակետը։ Ստ. Օրբելյանի պատմության ձեռագրերում, Հարանդ գավառի բնակավայրերի ցուցակում, մեզ հետաքրքրող տեղանունները հիշվում են հետևյալ հաջորդականությամբ՝

...Գնթաշեն	Ցողունի
Ղոկանի	Բորոտան
Բուղեան	Ագարակ...[20]

Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնպես հիշյալ տեղանունները նշված են համարյա կողք-կողքի։

Այս բերդերից ներքև, պատմական Քաշունիք գավառի տարածքում, Բարգուշատ և Հագարի գետերի միախառնման տեղից ոչ հեռու, Ադրբ. ՍՍՀ Ղուրաթլուի շրջանի Սամար գյուղի հարավային մասում, Բարգուշատ գետի աջ ափին ժամանակին կառուցված է եղել բերդ, որից այսօր քիչ բան է պահպանվել։ Այս բերդը հայտնի է «Ֆաթ-Ալի կալասի» անունով։ Տեղացիների վկայությամբ այն պատկանել է Բարգուշատ[21] գավառի տեր Ֆաթ-Ալի խանին։ Այս անձնավորությունը հիշվում է XVIII դարի Սյունիքի ազգային-ազատագրական պատերազմների ժամանակ տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ և հայ մատենագրության մեջ հայտնի է Բաթալի սուլթան[22] անունով։

Նկ. 1

Ժամանակին Ալիշանը ենթադրել էր, որ Ֆաթ-Ալի խանի նստավայրը պետք է եղած լինի Բարկուշատի բերդը, սակայն նրան հայտնի չի եղել վերջինիս դիրքը. «...Բարկուշատ ըստ հին ցուցակի, որ ի յետին դարս ի տերութեան այլազգեաց եղեալ է իշխանանիստ ուր և Փաթ Ալին վերոյիշեալ նստէր. այլ ոչ նշանակին դիրք նորին, հավանօրեն առ գետեզերբ. էր նորա ի հնումն և բերդ ամուր՝ ընդ նշանաւորս աշխարհին Սիւնեաց»[23]։

Բավական հետաքրքիր է Օրբելյանի մեկ այլ վկայություն, որը հաստատում է ինչպես Բորոտան և Բղեն, այնպես էլ Բարկուշատ բերդի տեղադրությունը։ «Առին ի 660 թուին զՍիւնիս, զՈրոտն, զԲորոտան, զԲղեն, զՊարկուշատ»[24]։ Հիշատակված բերդերից առ այսօր հայտնի է Սյունի և Որոտան բերդերի դիրքը։ Ենթադրվում է, որ Սիսիանի հյուսիսային մասում բարձրացող բլուրի վրա պահպանված

---

19 Ստեփանոս Օրբելյան, էջ 411։ Որոտան երկիրը նախկին Ծոուկ գավառն է (տե՛ս Թ. Խ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 136)։

20 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1488, էջ 210բ, ձեռ. № 2924, էջ 151բ, ձեռ. № 7503, էջ 227ա, ձեռ. № 6546, էջ 219բ, ձեռ. № 2698, էջ 176ա, ձեռ. № 2868, էջ 129ա, ձեռ. № 6520, էջ 141ա։ Բուղեան ընթերցումը տե՛ս ձեռ. № 2924, էջ 151բ, ձեռ. № 1488, էջ 210բ, մնացած դեպքերում՝ Բողեան։ Բորոտան տեղանունը գրիչների կողմից Բ և Ք տառերի շփոթելու հետևանքով դարձել է Քարոտան (Օրբելյան, էջ 517), Քորատուն (ձեռ. № 2868, էջ 129ա), Քորոդան (ձեռ. № 2924)։ Հանդիպում է նաև Բորոդան ընթերցումը (ձեռ. № 7503, էջ 227ա, ձեռ. № 6546, էջ 219բ)։

21 Բարգուշատը հին «Միւս Բաղք» կամ «Քաշունիք» գավառն է (տե՛ս Օրբելյան, էջ 75)։

22 «Ընտիր Պատմութիւն Դավիթ Բէգին...». Վաղարշապատ, 1871, էջ 16, 22, 23, 25։

23 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 282։

24 Ստեփանոս Օրբելյան, էջ 392։

բերդի ավերակները նախկին Սյունի բերդի մնացորդներն են[25]։ Որոտան բերդի ավերակները գտնվում են Լորաձորի գետաբերանի և Վաղուդի գյուղի միջև, Որոտան գետի աջ ափին[26]։ Եթե նկատի ունենանք Օրբելյանի կողմից թվարկված բերդերի հաջորդականությունը, սկսած Որոտան բերդից, ապա Դավութլուի բերդը կհամապատասխանի Բորոտանին, Գյավուր դալասին՝ Բղենին, իսկ այդ երրորդ ամրությունը՝ Բարկուշատ բերդին։

Այսպիսով, Բղեն բերդի տեղորոշմամբ հայտնի է դառնում նաև Սյունյաց երկու նշանավոր այլ բերդերի՝ Բորոտնի և Բարկուշատի տեղադրությունը։ Քանի որ այս բերդերը իրենց անունները ստացել են համանուն գյուղերից, ապա այս բերդերի տեղորոշմամբ լուծվում է նաև համանուն գյուղերի տեղադրության հարցը։ Բորոտան գյուղը այդ դեպքում պետք է համապատասխանի Դավութլու գյուղին, քանի որ վերջինս անհամեմատ ավելի մոտ է բերդին, քան մյուս բնակավայրերը։ Բղենը պետք է գտնվելիս լիներ Գյավուր դալասիի հարավ-արևելյան մասում, ուր նշմարվում են գյուղատեղի հետքեր, Բարկուշատը՝ Մամար գյուղի հարավ-արևելյան մասում, բերդին կից, քանի որ Մամար գյուղը, ժամանակի ընթացքում ընդարձակվելով, իր սահմանների մեջ է ընդգրկել բերդատեղին և գյուղատեղը։

Ա. ՂԱՐԱԴԵՈՂՅԱՆ

ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ԴՎԻՆԻ ՍՏՈՐԻՆ ԲԵՐԴՈՒՄ 1975 Թ.

Մեծավաստակ գիտնական Կ. Դ. Ղաֆադարյանը, Դվին հնավայրն ուսումնասիրելիս, նրա կարևոր տեղամասերից մեկը, որն ընդգրկում է միջնաբերդի լանջերը, պայմանականորեն անվանել էր Ստորին բերդ[1]։ Պեղումների առաջին տարիներին այնտեղ կատարվեցին հետախուզական որոշ աշխատանքներ, որոնք հետաքրքիր նյութեր տվեցին քաղաքի ուշ շրջանի սոցիալ-տնտեսական կյանքը և բաղաքաշինության մի շարք հարցերը պարզաբանելու համար։

1975 թ. Ստորին բերդի արևմտյան լանջում բացվեց մոտ 100 քառ. մ մակերեսով միջնադարյան բնակելի ոչ մեծ մի շինություն, որը բաղկացած էր նեղ միջանցքներով միմյանց հաղորդակից 8 տարբեր չափերի սենյակներից (նկ. 1)։

Տասնամյակների ընթացքում բնական աղետների ու թշնամու գործած ավերածությունների պատճառով շինությունը, ինչպես երևում է, քանիցս վերանորոգվել է, քանի որ պատերի համաչափությունները բավականաչափ խախտված էին (սենյակներից մեկի 5 մ երկարություն ունեցող պատը կտրվածքում շարված էր 40 սմ ադյուսով, 35 սմ քարով, իսկ 1 մ 17 սմ լայնությամբ պատը շարված էր 68 սմ ադյուսով և 68 սմ քարով և այլն) և կառույցը կորցրել էր նախնական տեսքը։

Շինության արևմտյան մասի փողոցին[2] նայող սենյակներից մեկում բացվեց մշակված քարերով շարված շքամուտքը (1 մ 20 սմ բացվածքով), առջևում տեղադրված 58 սմ երկարությամբ մի մեծ սալաքարի մնացորդով։ Ներքուստ կառույցը հարդարելու նպատակով գործ են ածել տեղում գտնված կաղապարի մեջ պատրաստված գաջե զարդեր, գույնզգույն խճաքարեր կամ ձեավոր ադյուսի երկրաչափական տարբեր զարդանախշեր։ Հետաքրքիր ձեավորում ուներ գիպսի մեջ ադյուսներով շարված մեծ դանգվածը. թրծած ադյուսները աստղաձև դասավորելու միջոցով ստեղծել են երկրաչափական մի համաչափ պատկեր։ Անկասկած այդ



Նկ. 1

25 Թ. Խ. Հակոբյան, Նշվ. աշխ., էջ 140։

26 Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), Երևան, 1968, էջ 206։

1 Կ. Դ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 24։

2 1974 թ., նախքան հիշյալ շինության բացվելը, նյութական մշակույթի մնացորդներից զուրկ այս տարածությունը պայմանականորեն անվանել էինք փողոց։ 1975 թ. պեղումները հաստատեցին այս ենթադրությունը։